Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ 6-րդ և 7-րդ կետերի հաստատված՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի « Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման միասնական խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022թ հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան օրերից (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ նոյեմբերի 24-ին ժամը 15:00-ին,

ՀՀ Արագածոտնի մարզի Հացաշենի հիմնական դպրոցում, գ. Հացաշեն, փողոց1, փակուղի 4, շենք 2:

Տեղեկությունների համար դիմել՝ 077702992, 093862766 hatsashen@schools.am